Հավելված N 22
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 6-ի N 598 - Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ, ՔՆՆԱԿԱՐԳԵՐԻ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ**

**ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N _______ ____ _____________ 20__ թ.**

# ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**ՊԱՏՎԻՐՄԱՆ, ԲԱՇԽՄԱՆ, ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ**

_______________________________________________ _______________
ստուգող մարմնի հասցեն հեռախոսը

[ ][ ][ ][ ] ____________________ ________________________________________
Անձնական կոդը պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

[ ][ ][ ][ ] ____________________ ________________________________________
Անձնական կոդը պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

[ ][ ][ ][ ] ____________________ ________________________________________
Անձնական կոդը պաշտոնը ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _______ _____________ 20___ թ., ավարտը՝ _______ _____________ 20___ թ.

_________________________________________________________________
Ստուգվող սուբյեկտի անվանումը, իրավական տեսակը

_______________________________________ ՀՎՀՀ [ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ]
Պետ. ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

_______________________________________________ _______________
Ստուգվող սուբյեկտի հասցեն Հեռախոսը

_______________________________________________ _______________
Ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը Հեռախոսը

Ստուգման հանձնարարագրի համարը՝ __________ տրված՝ ______________________________ կողմից՝ ____ ____ 20__ թ.

Ստուգման նպատակը, ընդգրկված հարցերի համարները՝
_________________________________________________________________
_________________________________________________________________
_________________________________________________________________
_________________________________________________________________
_________________________________________________________________

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

| Հ.հ. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 1. | Ստուգվող սուբյեկտի կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները | |
| 2. | Իրականացվող կրթական ծրագրերը | |
| 3. | Սովորողների թիվը տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | |
| 4. | Սովորողների փաստացի թիվը ստուգման պահին | |
| 5. | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը | |
| 6. | Նախորդ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը | |
| 7. | Ընթացիկ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը | |
| 8. | Նախորդ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը | |
| 9. | Ընթացիկ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը | |
| 10. | Նախորդ ուստարում աշխատանքից ազատված վարպետների թիվը | |
| 11. | Ընթացիկ ուստարում աշխատանքից ազատված վարպետների թիվը | |
| 12. | Նախորդ ուստարում աշխատանքի ընդունված վարպետների թիվը | |
| 13. | Ընթացիկ ուստարում աշխատանքի ընդունված վարպետների թիվը | |
| 14. | Փոխտնօրենների թիվը (նշել պաշտոնները) | |
| 15. | Ուսուցիչների թիվը | |
| 16. | Ատեստավորված ուսուցիչների թիվը | |
| 17. | Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը | |
| 18. | Վարպետների թիվը | |
| 19. | Լաբորանտների թիվը | |
| 20. | Գրադարանավարների թիվը | |

## ՀԱՐՑԱՇԱՐ

**ՀՀ կրթության պետական տեսչության կողմից նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր իրականացնող կազմակերպության սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանման, ավարտական պետական փաստաթղթերի ստացման, պահպանության և բաշխման վերաբերյալ իրականացվող ստուգումների**

| h.h. | Հարց | Հղում նորմատիվ իրավական ակտին | Այո | Ոչ | Չ/Պ | Կշիռ | Ստուգման տեսակը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումն ավարտվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմինի սահմանած՝ շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորման (*պետական քննություն մասնագիտական առանձին առարկայից, պետական քննություն մասնագիտական մի քանի առարկաներից (միջառարկայական քննություն), դիպլոմային նախագիծ, դիպլոմային աշխատանք*) անցկացման (*բանավոր, գրավոր, թեստային, գործնական աշխատանքների, իրավիճակային խնդիրների, դերային կատարումների, դրանց համակցված և այլ ձևերով*) կարգին համապատասխան: | ԿՄՕ 14-րդ հոդված, 6-րդ մաս<br>ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման | | | | 2 | փաստաթղթային և (կամ) ընթացքի նկատմամբ վերահսկողություն | |
| 2. | Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման նպատակով մասնագիտական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր մասնագիտության գծով ձևավորվել են (*տնօրենի հրամանով, պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքները սկսելուց առնվազն երկու շաբաթ առաջ*) պետական որակավորող հանձնաժողովներ (*առնվազն 5 հոգուց՝ նախագահ, նախագահի տեղակալ /ուսումնական հաստատության տնօրենը կամ տնօրենի տեղակալը, քարտուղար/ նշանակում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը՝ հաստատության աշխատակիցների կազմից / և հանձնաժողովի անդամներ / համապատասխան ամբիոնների (ցիկլային (առարկայական) հանձնաժողովների) վարիչները, դասախոսները/*): | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 3-րդ, 12-րդ կետեր | | | | 2 | փաստաթղթային | |
| 3 | Պետական որակավորող հանձնաժողովի նախագահներին (*տվյալ ուսումնական հաստատությունում չաշխատող անձանցից*) նշանակել է պետական կառավարման լիազորված մարմինը՝ ուսումնական հաստատության տնօրենի առաջարկությամբ: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 11-րդ կետ | | | | 1 | փաստաթղթային | |
| 4 | Դիպլոմային նախագծի (աշխատանքի) նախապատրաստման ընթացքում ուսումնական հաստատության տնօրենի հրամանով յուրաքանչյուր շրջանավարտին կցվել է ղեկավար(ներ): | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 9-րդ կետ | | | | 1 | փաստաթղթային | |
| 5 | Դիպլոմային նախագծերը (աշխատանքները) ենթակարկվել են | ՀՀ ԿԳ նախարարի | | | | 1 | փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գրախոսման (*Գրախոսների կազմը համապատասխան ամբիոնի վարիչի (ցիկլային (առարկայական) հանձնաժողովի նախագահի) ներկայացմամբ հաստատում է ուսումնական հաստատության տնօրենը*): | 21.07.2006թ. №638-Ն հրաման, 17.5 ենթակետ | | | | | | |
| 6 | Պետական որակավորող հանձնաժողովների աշխատանքները (*հանձնաժողովի կազմի 2/3-ից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում*) կազմակերպվել են մասնագիտական ուսումնական հաստատության տվյալ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում, | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 13-րդ և 18-րդ կետեր | | | | **2** | փաստաթղթային | |
| 7 | Պետական քննությունների քանակը սահմանվել է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի պահանջներին կամ ուսումնական պլանին համապատասխան: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 19-րդ կետ | | | | **3** | փաստաթղթային | |
| 8 | Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը համաձայնեցվել է հանձնաժողովի նախագահի հետ և հաստատվել է ուսումնական հաստատության տնօրենի կողմից, պահպանելով պետական ամփոփիչ ստուգումների միջև սահմանված 5-7 օր ժամկետը: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 15-րդ, 16-րդ, | | | | **2** | փաստաթղթային | |
| 9 | Պետական ամփոփիչ ստուգման թույլատրվել են այն ուսանողները, ովքեր կատարել են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր պահանջները: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 14-րդ կետ | | | | **3** | փաստաթղթային | |
| 10 | Մինչև պետական քննությունների կամ դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանության սկիզբը պետական որակավորող հանձնաժողովին ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.<br>- Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի կողմից հաստատված տեղեկանքը ուսանողի կողմից ուսումնական պլանով նախատեսված առարկաների, պրակտիկաների ամփոփիչ ստուգման վերաբերյալ:<br>- Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հրամանի քաղվածքը ուսանողին պետական քննությանը կամ դիպլոմային նախագծի (աշխատանքի) պաշտպանությանը թույլատրության վերաբերյալ:<br>- Բանավոր պետական քննության տոմսերի փաթեթը կամ գրավոր պետական քննության հանձնարարությունների տարբերակները:<br>- Պետական քննությունների առարկայական ծրագրերը, իսկ արվեստի մասնագիտությունների գծով՝ ելույթների ծրագրերը:<br>-Դիպլոմային նախագիծը /աշխատանքը/ ղեկավարի կարծիքը, համապատասխան մասնագետի գրախոսականը: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 17-րդ կետ | | | | **2** | փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | Դիպլոմային նախագծի (աշխատանքի) և պետական քննության արդյունքներով դրական գնահատված շրջանավարտներին պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ շնորհվել է համապատասխան մասնագիտական որակավորում և տրվել է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/: Որոշումը հաստատվել է ուսումնական հաստատության տնօրենի հրամանով: Հրամանագրվել է նաև շրջանավարտների՝ ուսումնական հաստատությունը ավարտելը: | -ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 21-րդ, 22-րդ, 26-րդ և 32-րդ կետեր | | | | **2** | փաստաթղթային | |
| 12 | Ուսումնական պլանով նախատեսված առարկաների, տարբերակված ստուգարքների (կիսամյակային գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով հանձնած, միաժամանակ պետական ամփոփիչ ատեստավորումից (դիպլոմային նախագիծի (աշխատանքը) պաշտպանություն կամ պետական քննություն) «գերազանց» գնահատված շրջանավարտներին տրվել է գերազանցության դիպլոմ: | - ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 23-րդ կետ,<br>- ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.№609-Ն հրաման, հավելված 2, 6-րդ կետ | | | | **1** | փաստաթղթային | |
| 13 | Պետական որակավորող հանձնաժողովի բոլոր նիստերը (*դիպլոմային նախագծի (աշխատանքի) և պետական քննությունների ժամանակ դրսևորած գիտելիքների գնահատման, ինչպես նաև որակավորում շնորհելու և դիպլոմ (գերազանցության կամ ոչ գերազանցության) տալու մասին*) սահմանված ձևով արձանագրվել են ուսումնական հաստատության գործերում առկա արձանագրությունների հատուկ գրքում, որը թելակարված, էջակալված և կնքված է: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 24-րդ, 25-րդ կետեր | | | | **2** | փաստաթղթային | |
| 14 | Պետական քննությունից «անբավարար» գնահատական ստացած ուսանողներին հնարավորություն տրվել է օգտվելու մյուս պետական քննությունները հանձնելու իրավունքից: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 26-րդ, կետ | | | | **2** | փաստաթղթային | |
| 15 | Պետական ամփոփիչ ատեստավորումը չհանձնած ուսանողներին թույլատրվել է վերահանձնել այն՝ ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո 3 տարվա ընթացքում (երեք տարուց հետո պետական քննությունների վերահանձնման թույլտվությունը տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը): | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 27-րդ կետ | | | | **1** | փաստաթղթային | |
| 16 | Հարգելի պատճառով (փաստաթղթերով հաստատված) պետական ամփոփիչ ատեստավորումը չհանձնած ուսանողների ուսուցման ժամկետը ուսումնական հաստատության տնօրենը երկարացրել է (մեկ տարուց ոչ ավելի) մինչև պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի հաջորդ ժամկետը: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 28-րդ և 30-րդ կետեր | | | | **1** | փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | Պետական ամփոփիչ ատեստավորումը չհանձնած ուսանողներին տրվել են ուսումնառության լրիվ կուրսը ավարտելու մասին տեղեկանք (հավելված 3) և սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 29-րդ, կետ | | | | 1 | փաստաթղթային | |
| 18 | Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովի նախագահը մեկ շաբաթվա ընթացքում հաշվետվություն ներկայացնրել է կրթության պետական կառավարման լիազորված մարմին, որի պատճենը տրվել է ուսումնական հաստատության տնօրենին: Պետական որակավորող հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը քննարկվել է մասնագիտական ուսումնական հաստատության խորհրդում, որի հիման վրա մշակվել են ուսումնական գործընթացը կատարելագործելու առաջարկություններ: | ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման, 31-րդ, 34-րդ կետեր | | | | 1 | փաստաթղթային | |
| 19. | Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձին տրվում է արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթ (դիպլոմ և դրա ներդիրը, վարպետային ուսուցման որակավորման վկայականը)՝ տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության կամ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կողմից: | ԿՄՕ հոդված 44, 1-ին մաս<br>ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 13, 1-ին,2-րդ, մասեր<br>ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.№609-Ն հրաման, հավելված 2, 5-րդ կետ | | | | 1 | փաստաթղթային | |
| 20 | Շրջանավարտներին ուսումնական հաստատության կողմից դիպլոմները տրվել են անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի ներկայացմամբ, կամ այլ անձի՝ նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր ներկայացնելու դեպքում: | ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.№609-Ն հրաման, հավելված 2, 12-րդ և 13-րդ կետեր | | | | 1 | փաստաթղթային | |
| 21 | Դիպլոմները լրացվել են ուսումնական հաստատության կողմից համակարգչային տպատառերով կամ հստակ և գեղեցիկ ձեռագրով՝ սև թանաքով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, իսկ դիպլոմի հավելվածը՝ միայն հայերենով, առանց ջնջում կամ ուղղում կատարելու, շրջանավարտի անձնագրում կամ ծննդյան վկայականում եղած գրառումներին (ազգանունը, անունը, հայրանունը) համապատասխան: | ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.№609-Ն հրաման, հավելված 2, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետեր | | | | 1 | փաստաթղթային | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Դիպլոմները և դրանց ներդիրները ստորագրվել են ուսումնական հաստատության տնօրենի, տնօրենի տեղակալի և պետական որակավորող հանձնաժողովի նախագահի կողմից: | | | | | | | |
| 22 | Դիպլոմում սխալ գրառում հայտնաբերելիս կամ դիպլոմը գործածության ընթացքում տարբեր պատճառներով ոչ պիտանի դառնալու դեպքում և (կամ) լրացման ժամանակ խոտանված բլանկները դուրս են գրվել տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմած ակտով (2 օրինակից), որը հաստատել է ուսումնական հաստատության տնօրենը: Ակտի մի օրինակը պահվել է ուսումնական հաստատությունում, իսկ երկրորդը՝ միջնորդագրի հետ ներկայացվել է նախարարության աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժին՝ նոր դիպլոմ ստանալու համար: | ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.№609-Ն հրաման, հավելված 2, 14-րդ, 17-րդ և 18-րդ կետեր | | | | **2** | փաստաթղթային | |
| 23 | Ուսումնական հաստատություններում դիպլոմների ստացման և բաշխման հաշվառումը կատարվել է էջակալված, կարված և կնքված հատուկ մատյաններում, որոնցում գրառվել են հետևյալ տվյալները:<br>1) Դիպլոմի գրանցման հերթական համարը,<br>2) Դիպլոմ ստացողի անունը, հայրանունը, ազգանունը,<br>3) Մասնագիտության անվանումը, որակավորումը,<br>4) Դիպլոմի համարը,<br>5)Պետական որակավորող հանձնաժողովի արձանագրության համարը, տարին, ամսաթիվը,<br>6) Փաստաթուղթ ստացող անձի ստորագրությունը: | ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.№609-Ն հրաման, հավելված 2, 19-րդ կետ | | | | **2** | փաստաթղթային | |
| 24 | Դիպլոմները գրանցվել են և պահվում են ուսումնական հաստատություններում որպես հատուկ հաշվառման փաստաթուղթ: Դրանք չեն հանձնվել կամ փոխանցվել մեկ այլ հաստատության, իսկ դիպլոմների բաշխումից հետո ուսումնական հաստատության տնօրենը մինչև ընթացիկ տարվա ավարտը հաշվետվություն է ներկայացրել նախարարության աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժին: | ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.№609-Ն հրաման, հավելված 2, 20-րդ և 22-րդ կետեր | | | | **2** | փաստաթղթային | |
| 25 | Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կամ լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին տրվել է ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների նշումով: | ԿՄՕ հոդված 44, 6-րդ կետ<br>ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 13, 3-րդ մաս | | | | **1** | փաստաթղթային | |

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | «Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է | V | | |
| 2. | «Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում | | V | |
| 3. | «Չ/Պ»՝ չի պահանջվում | | | V |

Ստուգաթերթը պատրաստվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1. **ԿՄՕ** - «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք /ՀՕ-297, 1999թ./
2. **ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք** - «Նախնական մասնագիտաան (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք /ՀՕ-164-Ն, 2005թ./
3. **ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ.№609-Ն հրաման, հավելված 2 -** «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին»
4. **ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. №638-Ն հրաման** - «ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ